

**ԹՐԱՄՓԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ
ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ³⁴**

Գարիկ Քեռյան

Բանալի բառեր` Թրամփ, Իրան, միջուկային ծրագիր, արտաքին քաղաքականություն, Հարավային Կովկաս, Ռուսաստան, Եվրոպական Միություն:

2017թ. հունվարի 20-ին իր պաշտոնավարումը սկսեց ԱՄՆ-ի նոր նախագահ Դոնալդ Թրամփը: Նոր վարչակարգի գործողություններում քաղաքագիտական վերլուծական հանրությունը ուշի ուշով փորձում է գտնել կապը նախընտրական շրջանում հնչեցված բավականին արմատական արտաքին քաղաքական քայլերի իրականացման մասին` հայտարարությունների և իրական գործողությունների միջև: Չէ՞ որ Թրամփը հայտարարում էր <<վաշինգտոնյան ձախճի>> չորացման իր առաքելության մասին, խոստանալով դիմել կոնկրետ գործողությունների: Հետևելով վարչակազմի հետ-հունվարյան գործողություններին` կարելի է արձանագրել, որ արտաքին քաղաքական մեխանիզմի նուրբ և աստիճանական վերակարգավորման գործընթաց է գնում, ճշտվում են արտաքին քաղաքական գերակայությունները և հանգուցային ուղղությունները: Տրանսխաղաղօվկիանոսյան համագործակցության ծրագրից դուրս գալու մասին նախագահի հրամանագիրն այդքան հուշում է, որ խոսքից գործին անցնելն իրեն սպասեցնել չի տա: Այս ուղղությամբ դեռ ամեն ինչ պարզ չէ: Պատճառը ռուս ամերիկյան հակամարտությունն է և կողմնակալ համագործակցության կոշտ շրջանակները: Սակայն նոր վարչակարգի կողմից դեպի իզոլյացիոնիզմի՝ զլոբալ քաղաքական գործընթացներից մեկուսացվելու ամերիկյան հին քաղաքականության սկզբունքներին հետդարձը աստիճանաբար տեղի է տալիս: Արդեն կարծիքներ են հնչում Ռուսաստանի նկատմամբ դիրքորոշումների վերանայման մասին, այնպես որ, երբ անհրաժեշտ է, պետք է դիմակայել Ռուսաստանին և համագործակցել ամենուր, որտեղ այդ հնարավոր է անել:

Հարավային Կովկասում մերձավորարևելյան անկայուն տարածաշրջանի երկրների կառավարող քաղաքական շրջանակները նույնպես հետևում են վաշինգտոնյան փոփոխություններին: Հատկապես Երևանում և Բաքվում փորձում են որսալ Թրամփի և նրա շրջապատի բարձրաստիճան պաշտոնյաների ամեն մի արտահայտություն` հուսալով, որ կարող են պարզել `հայամետ թե ադրբեջանամետ են լինելու նոր վարչակարգի քաղաքական քայլերը: Հատկապես հույսեր են փայփայում ադրբեջանական հետազոտական կենտրոնների փորձագետները, որոնք հաճախ էին դժգոհում նախկին պետքարտուղար Հիլարի Քլինթոնի իբր հայամետ դիրքորոշումից: Նրանց սրտովն է Թրամփի նախընտրական շրջանում և հետո արված հայտարարությունները ուրիշ պետությունների ներքին գործերին չմիջամտելու ծգտման մասին: Սակայն մեր տարածաշրջանում անհանգստություններն ու վախերը կապված են ոչ միայն դեռևս չլուծված աբխազական, հարավօսական և դարաբաղյան հակամարտությունների պահպանման, այլև ԱՄՆ-Իրան հարաբերություններում նոր տագնապալի զարգացումների հետ: Բոլորը լավ են հիշում մոտ հինգ տարի առաջ ստեղծված իրավիճակը, երբ Իրանի միջու-

^{34 34} Հոդվածն ընդունվել է 28.11.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը

կային օբյեկտների ամերիկյան ռմբակոծությունների շատ բարձր հավանականությունը առաջ էր բերել տարածաշրջանային սպասվող աղետի կանխագագացում և լուրջ տագնապ Հարավային Կովկասի պետություններում: Եվ պատահական չէ՝ ԱՄՆ-Իրան հարաբերությունների մասնակի կարգավորումը նախագահ Բարաք Օբամայի օրոք զգալիորեն թուլացրեց լարվածությունը տարածաշրջանում: Այն թերևս կարելի է համարել Օբամայի թիմի հաջող ձեռքբերում արաբական գարնան և ուկրաինական ձգնաժամի հարուցած արյունալի իրադարձությունների համապատկերում: Հիշեցնենք, որ Իրանի հետ այսպես կոչված միջուկային գործարքը կնքվեց Վիեննայում 2015թ. հուլիսին և արդյունք էր 18 ամիս տևած բանակցությունների, որը վարում էր նախկին պետքարտուղար Ջոն Թերին՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Չինաստանի և Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչների մասնակցությամբ: Իրանը համաձայնեց դադարեցնել իր միջուկային ծրագիրը՝ տնտեսությանը հսկայական վնասներ պատճառող պատժամիջոցներից ազատվելու համար: Գործարքի հակառակորդները երկրի ներսում և դրսում՝ հանձին, Իսրայելի, համարում էին այն թեհրանի կողմից խաբեություն, որը դանդաղեցնելով միջուկային գործարքը, փորձում է խուսափել պատժամիջոցներից և միջուկային օբյեկտների ստուգումներից[1]:

Այդ ժամանակ Իրանի վրա պատժամիջոցներով ճնշումն զգալիորեն թուլացավ, զգացվեց էական աշխուժացում ԵՄ-Իրան հարաբերություններում: Հարավկովկասյան երկրները հնարավորություն ստացան առանց լուրջ խոչընդոտների աշխուժացնելու տնտեսական փոխհարաբերությունները Իրանի հետ: Սակայն 2014-15 թթ. իրանա-ամերիկյան հարաբերությունների ծնհալը Թրամփը անվերադարձ ուղարկում է դեպի անցյալ, եթե իհարկե նոր իրադարձությունները չփոխեն դեպքերի ընթացքը: Առաջին իսկ օրերից սկսվեցին անթույլատրելի հարձակումները Իրանի նկատմամբ: Թրամփը Իրանի միջուկային զենքին նվիրված 2015 թ. Վիեննայի համաձայնագիրը որակեց որպես <<երբևէ կնքված ամենավատ գործարքը>> ամերիկյան դիվանագիտության համար: [2]: Թրամփի ազգային անվտանգության գծով խորհրդական Մայքլ Ֆիլինը արդեն փետրվարի 3-ին Սպիտակ Տան կայքում տեղադրեց հայտարարություն՝ նշելով որ անցել են այն օրերը, երբ ԱՄՆ-ը և համաշխարհային հանրությունը աչք էին փակում Իրանի ռազմատենչ գործողությունների վրա[3]: Ֆիլինի ուղիմատում հիշեցնող հայտարարությունը մեղադրում է Իրանին Սերժավոր Արևելքում ապակայունացնող ռազմատենչ գործողությունների համար՝ որակելով այն <<ահաբեկչության առաջատար համաշխարհային հովանավոր>> ԱՄՆ-ին և նրա դաշնակիցներին սպառնացող վտանգավոր ուժ[4]: Նման բովանդակության հայտարարություններ արեցին նոր վարչակարգի բարձրաստիճան պաշտոնյաները՝ պետքարտուղար Ռեքս Թիլերսոնը, պաշտպանության նախարար Ջեյմս Մետտիսը, Սպիտակ Տան մամլո խոսնակ Շոն Սպայսերը: Նրանք բոլորը համակարծիք են իրենց նախագահի հետ և թեհրանի քաղաքականությունը համարում են Սիրիայում, Եմենում, Լիբանանում և Իրաքում ամերիկյան շահերի հիմնական խախտողը: Չգսպված Իրանը կարող է վերածվել Հյուսիսային Կորեայի. այս է հիմնական փաստարկը, որով հիմնավորում են նոր հակաիրանական քայլերը: Իհարկե վաշինգտոնյան նոր դեկավարները լրիվ անտեսում են Իրան-Ռուսաստան-Թուրքիա համագործակցության նոր ձևաչափը և իրանցիների ակտիվ մասնակցությունը սիրիական ձգնաժամի հաղթահարման ուղղված Աստանայի բանակցություններին: Փոխարենը՝ Թրամփի վարչակարգը առաջին իսկ օրվանից թմբկահարում է, որ այլևս չի հանդուրժելու Իրանի սադրանքները:

Թրամփի երդմնակալությունից կարճ ժամանակ անց՝ արդեն փետրվարի 4-ին ԱՄՆ Պետդեպարտամենտը հայտարարեց իրանական հրթիռային ծրագրի հետ կապ-

ված մի շարք ընկերությունների և անձանց նկատմամբ նոր պատժամիջոցներ սահմանելու մասին: Նոր նախագահը շտապեց հայտարարել, որ Իրանը համարում է ամենուրեք զենք և փող բաժանող համար մեկ ահաբեկչական պետությունը: Ջուզահեռ ընթանում է նաև ԱՄՆ-ին և Իսրայելին հակազդելու Իրանի ասսիմետրիկ հնարավորությունների մասին քաղաքական ռազմավարական հետազոտությունների ու զեկույցների տարածումը: Անհանգստացնող է նաև իրանական բալիստիկ իրթիռների ոչնչացման նպատակով ռազմական գործողությունների սկսման նպատակահարմարության քննարկումները: Վաշինգտոնին մոտ կանգնած աղբյուրների վերլուծական նյութերից երևում է, որ բացառված չէ նաև դրսից երկրի ներքաղաքական ապակյունացմանը նպատակաուղղված գործողություններ օտարերկրյա հատուկ ծառայությունների կողմից: Նման մտահոգություն կար հատկապես ամռանը, երբ ընթանում էին նախագահական ընտրությունները: Ամեն դեպքում տպավորությունն այն է, որ ամերիկյան արտաքին քաղաքականությունը տարածաշրջանում վերադառնում է դեպի 2010-2013 թթ. մոտեցումները:

Չպետք է անտեսել նաև շատ կարևոր մի հանգամանք. հաստատված իրողությունն է՝ ԱՄՆ մերձավորարևելյան քաղաքականության շաղկապվածությունը Իսրայելի հետ: Փաստացիորեն Իրան-Իսրայել թշնամական և անհանդուրժողական հարաբերություններն անմիջականորեն ազդում են ԱՄՆ-Իրան փոխհարաբերությունների վրա: Թրամփի հակաիրանական հռետորաբանությունը նախընտրական և հետընտրական շրջանում, արդեն հուշում էին, որ Իսրայելի համար ձեռնադրված է ստեղծվելու: Այստեղ մեկ անգամ ևս պետք է ընդգծել հակաիրանական գործունեության համար հարավկովկասյան երկրների տարածքների օգտագործման կարևորությունը ԱՄՆ-ի և Իսրայելի համար: Պատահական չէր, իհարկե, Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի պաշտոնական այցը Բաքու 2016թ. դեկտեմբերին, որն առավել անհանգստություն առաջացրեց Իրանում և Հայաստանում: Թեհրանում բացասական արձագանքները կապված էին իրանական միջուկային ծրագրի շուրջ ձեռք բերված համաձայնությունների ձակատագրի հետ, իսկ Երևանում դեռ թարմ էին 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ ադրբեջանական զինուժի կողմից կիրառված իսրայելական արտադրության զինատեսակների տպավորությունները: Ինչևիցե, բոլորի համար էլ պարզ է, որ Իրանի նկատմամբ ցանկացած տիպի ռազմական գործողություն անմիջականորեն շոշափելու է Հարավային Կովկասի երկրների շահերը: Այս առումով կարելի է կանխատեսել, որ տարածաշրջանի պետությունների և ժողովուրդների համար Թրամփի վարչակարգի կառավարման տարիները միապաղաղ չեն լինելու:

Անհանգստության և տագնապի մթնոլորտում առկա են նաև դրական կանխատեսումներ: Որոշ վերլուծաբանների կարծիքով՝ Իրանի նախագահ Հասան Ռուհանիի այցը Մոսկվա, ռուս-իրանական համագործակցային հարաբերությունները, ԵՄ արտաքին քաղաքականության դեկավար Մոզերինիի ամերիկյան կողմին ուղղված նախկին և ներկա զսպիչ հայտարարությունները, Չինաստանի գործոնը և խոշոր գործարարին բնորոշ ԱՄՆ նախագահի անձնական հատկանիշները ի վերջո կստիպեն վերջինիս լիելու ավելի իրատես և գնալու Իրանի հետ բանակցությունների: Առավել մեծ է Իրան-ՌԴ հարաբերությունների զարգացման ազդեցությունը ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության իրանական ուղղության վրա: Մոսկվան լուրջ քայլեր է անում Իրանին եվրասիական ինտեգրացիոն գործընթացներում ընդգրկելու համար, որն ինքնստիճյան ինչ որ առումով զսպում է ԱՄՆ-ին: Փետրվարին կայացավ փոխվարչապետ Իգոր Շուվալովի գլխավորությամբ ՌԴ կառավարական պատվիրակության և ԵԱՏՄ պաշտոնական ներկայացուցիչների այցը Իրան: Կողմերը շտապում են ավարտել բանակցությո-

յունները ազատ առևտրի գոտու ստեղծման մասին, որն իհարկե կարող է իրական դարձնել ռուս-իրանական ռազմաքաղաքական համագործակցությունը Սիրիայում: Քաղաքական հետազոտական կենտրոններում բավականին հաճախ կարող ենք հանդիպել այն կանխատեսումներին, որոնց համաձայն՝ Թրամփի հակաիրանական կեցվածքը կարծրացնում է Մոսկվա-Թեհրան առանցքը և հակառակը: Միջազգային պատժամիջոցներից նոր ազատված Իրանը նորից կարող է հայտնվել ԱՄՆ կոշտ ճնշման տակ, որի դեպքում ԵԱՏՄ-ի հետ ազատ առևտրի գոտին կարող է նրա համար <<անվտանգության բարձիկ>> դառնալ [5]: Այս նույն պատճառով Իրանը ձգտում է զարգացնելու հարաբերությունները բոլոր գործընկեր հարևանների հետ բոլոր հնարավոր ձևաչափերով: Ուշագրավ է Պարսից ծոցը Սև ծովին կապելու տրանսպորտային և առևտրական հաղորդակցության ուղիների ստեղծման պլանների ակտիվ քննարկումները, որոնք շահավետ են հատկապես Հայաստանի և Վրաստանի համար: Ապրիլին Թեհրանը և Թբիլիսին մի քանի համատեղ միջոցառումներ անցկացրին երկկողմանի հարաբերությունների զարգացման հեռահար նպատակներով: Այս գործում խոչընդոտները բավականին շատ են, որովհետև արևմտյան ինտեգրացիայի ուղին բռնած Վրաստանը անկարող է անտեսել ԱՄՆ նոր վարչակարգի դիրքորոշումներն Իրանի նկատմամբ: Ամեն դեպքում Պարսից ծոցից Սև ծով նոր տրանսպորտային կոմունիկացիաների կառուցումը շատ գրավիչ է տարածաշրջանի երկրների համար, հատկապես երբ այն կարող է ուղեկցվել էներգետիկ նախագծերի իրականացմամբ: Բանակցությունների արդյունքների մասին բավականին հուսադրող էին Իրանի փոխնախագահ Ջհանգարիի հայտարարությունները և Ռուսաստան-Վրաստան-Հայաստան էներգոհամակարգերի նույնականացման մասին պայմանավորվածությունները [6]: Իհարկե դեռ վաղ է խոսել այս ծրագրերի իրականացման իրական հնարավորությունների մասին, բայց ակնհայտ է, որ պաշտոնավարման սկզբից ևեթ ինչքան որ ուժեղանում է Թրամփի ճնշումն Իրանի վրա, այնքան էլ Իրանը ձգտում է դուրս պրծնելու Ռուսաստանի և մյուս հարևանների հետ համագործակցությունը զարգացնելով: Վերջին զարգացումները մեկ անգամ ևս ապացուցում են այս իրողությունը: Հոկտեմբերի սկզբներին Սալիտակ Տանը մոտ կանգնած տեղեկատվական աղբյուրները հայտնեցին, որ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հակված է Իրանի հետ միջուկային գործարքը չեղյալ համարելուն: NBC-ի տեղեկություններով՝ Թրամփը որոշումը կընդունի մինչև հոկտեմբերի 15-ը և ամերիկացի օրենսդիրների համար 60 օրով պատուհան է կբացի, որի ընթացքում նրանք պետք է որոշեն՝ Իրանի դեմ նոր պատժամիջոցներ սահմանել, թե ոչ, որոնք հանվել էին Թեհրանի հետ միջուկային գործարքի շրջանակում [7]: Սրան անմիջապես հաջորդեց ՌԴ նախագահ Վ. Պուտինի այցը Թեհրան, որտեղ նոյեմբերի 1-ին տեղի ունեցան եռակողմ բանակցություններ Իրանի և Ադրբեջանի նախագահների հետ: Այստեղ ռուս-իրանական էներգետիկ համագործակցության համաձայնագրերը նախատեսում են դեպի Հնդկաստան գազամուղի կառուցում, իրանական գազի և նավթի հանքերի համատեղ շահագործում և մինչև 7 մլրդ դոլարի ներդրումներ [8]:

Իրանա-ամերիկյան հարաբերություններում նոր տեղաշարժերն անմիջականորեն ազդում են ոչ միայն Իրան-Ռուսաստան և Իրան-Հարավային Կովկասի պետություններ հարաբերությունների, այլև մերձավորարևելյան տարածաշրջանային մյուս քաղաքական իրողությունների վրա: Օբյեկտիվորեն Անկարայի և Թեհրանի շահերը համընկնում են քրդական հարցում, որը նվազեցնում է սիրիական հարցում թուրք-իրանական դիվանագիտական համագործակցային ձևաչափը չեզոքացնելու Վաշինգտոնի հնարավորությունները: Այս համագործակցությունը, որն առավել հստակ և կայուն դրսևորումներ ունեցավ իրաքյան Քրդստանի հանրաքվեից հետո, Թրամփի համար լուրջ մար-

տահրավեր է, մանավանդ որ նա Իսլամական պետության փոխարեն Իրանին է մատնացույց անում՝ որպես ահաբեկչության աղբյուրի[9]: Մարտահրավեր է նաև ԵՄ դիրքորոշումը, որը ոչ մի կերպ չի համընկնում ամերիկյանի հետ: ՄԱԿ ՉԱ վերջին նստաշրջանում վեցյակիե եւ Իրանի նախարարների երկու ժամ տևած հանդիպման արդյունքներով Եվրոպական դիվանագիտության ղեկավար Ֆեդերիկա Մոգերինին հայտարարել է՝ Որպես ԵՄ ներկայացուցիչ, կարող եմ ասել, որ մենք՝ եվրոպացիներս, ամեն ինչ կանենք, որպեսզի համաձայնագիրը պահպանենք[10]: Կասկած չկա, որ ԵՄ-ն իսկապես առավելագույն ջանքեր կգործադրի Իրանի հարցով համաձայնագիրը պահպանելու համար, իսկ Թրամփին արդյոք կհաջողվի՞ հաղթահարել իր դաշնակիցներին դեռևս մնում է անպատասխան:

Այսպիսով՝ Թրամփի վարչակարգը փորձում է Իրանի հետ հարաբերությունների վերանայումը դարձնել Մերձավոր Արևելքում նոր աշխարհաքաղաքական իրավիճակ ստեղծելու գործիք: Ռուս-թուրք-իրանական հաշտարար քաղաքականության ճակատագիրը Սիրիայում մեծապես կախված է այդ ծրագրերի իրականացման հաջողությունից: Առկա է նաև միջազգային հանրության համակրանքը Իրանի հանդեպ, երբ խոսքը վերաբերվում է միջուկային ծրագրին: Այդ հանգամանքը նկատի ունեն Ռուսիան, երբ ՄԱԿ-ում նշեց, որ ցանկացած երկիր, որը կխախտի իրանական միջուկային ծրագրի մասին համաձայնագիրը, կընտրի մեկուսացման ուղին, քանի որ դա երկկողմանի համաձայնագիր չէ, ու այն վճռորոշ դեր է կատարում համաշխարհային ու տարածաշրջանային անվտանգության հարցում: Համաձայնագրից դուրս գալը կլինի խայտառակություն, եթե ԱՄՆ-ն հրաժարվի դրանից, ապա ամերիկյան ժողովուրդը, ամբողջ աշխարհը չի աջակցի այդ քայլը [11]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Елена Ханенкова - Новые внешнеполитические движения США: шах и мат Ирану <https://regnum.ru/news/polit/2266584.html>
2. Տե՛ս Станислав Тарасов - Для США врагом номер один становится Иран <https://regnum.ru/news/polit/2266645.html>
3. Տե՛ս Андрей Арешев - Конфликт Трампа с Ираном станет трагедией для Кавказа, <https://regnum.ru/news/polit/2246625.htm>
4. Տե՛ս Андрей Арешев - Конфликт Трампа с Ираном станет трагедией для Кавказа, <https://regnum.ru/news/polit/2246625.htm>
5. Տե՛ս Александр Шустов, Геополитическая ось Москва-Тегеран изменит Евразию, <http://eurasia.expert/geopoliticheskaya-os-moskva-tegeran-izmenit-evraziyu/>
6. Տե՛ս Տե՛ս Александр Шустов, Грузия – Иран: удастся ли связать Персидский залив и Черное море?, <http://eurasia.expert/gruziya-iran-udastsya-li-svyazat-persidskiy-zaliv-i-chnoe-more/>
7. Տե՛ս <https://news.am/arm/news/411015.html>
8. Տե՛ս http://svpressa.ru/world/article/185110/?rss_mirtesen=1&utm_campaign=transit&utm_source=mirtesen&utm_medium=news&from=mirtesen
9. Տե՛ս Станислав Тарасов - Трамп на Ближнем Востоке: предтеча будущих потрясений, <https://regnum.ru/news/polit/2277515.html>
10. Տե՛ս <https://news.am/arm/news/411009.html>
11. Տե՛ս <https://news.am/arm/news/410972.html>

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Թրամփի վարչակարգի արտաքին քաղաքական մոտեցումները Իրանի միջուկային ծրագրի նկատմամբ
Գարիկ Քերյան**

Թրամփի վարչակարգը արտաքին քաղաքականության աստիճանական վերակարգավորման գործընթաց է սկսել: Ճշտվում են երկրի արտաքին քաղաքական գերակայությունները և հանգուցային ուղղությունները: Համաձայն նախընտրական խոստումների՝ վերանայվում է նաև իրանական ուղղությունը՝ Իրանի հետ 2015թ. կնքված միջուկային գործարքը չեղարկելու նպատակով:

РЕЗЮМЕ

**Внешнеполитические подходы администрации Трампа по отношению к ядерной программе Ирана
Гарик Керян**

Ключевые слова: Трамп, Иран, ядерная программа, внешняя политика, Южный Кавказ, Россия, Европейский Союз

Администрация Трампа начала процесс постепенного пересмотра внешнеполитического курса. Уточняются приоритеты и ключевые направления внешней политики страны. Согласно предвыборным обещаниям пересматривается также иранское направление, цель которого денонсация заключенного с Ираном ядерного договора 2015 г.

SUMMARY

**Foreign Policy Approaches of Trump's Administration Towards the Nuclear Program of Iran
Garik Keryan**

Keywords: Trump, Iran, nuclear program, foreign policy, South Caucasus, Russia, European Union

Trump's administration launched the process of gradual revision of foreign policy. Key directions and priorities of the State's foreign policy are being clarified. Iranian direction is also being revised in accordance with campaign promises, the aim of which is the denunciation of the nuclear treaty signed with Iran in 2015.